



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
« **ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**»



[Signature] Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«20» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 12

Ձեռնարկողը՝

«Հայկական նավթի և գազի ընկերություն» ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Մարզայան 26/1

Գործունեությունը

«Հ երկրորդ պայմանական տարածքում նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



[Signature] Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 12

<<20>> 02 2018թ.

<< Երկրորդ պայմանական տարածքում նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<<ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	<< Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզեր

<<ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ կողմից << 2-րդ պայմանական տարածքում՝ 2018-2023 թ.թ նախատեսվում է իրականացնել նավթի և գազի երկրաբանատորոնողական աշխատանքներ, որի նպատակն է՝ բացահայտել խորքային ճեղքավորությունների տարածական դիրքը, որոշել դրանց ձևը և կառուցվածքը, կազմել ապարների հավաքիչ հատկությունների քատեզներն ըստ առանձին պարամետրերի (ծակոտկենություն, թափանցելիություն, կարբոնատացում) կառուցել ճեղքավարված դաշտի կառուցվածքային կտրվածքները և գնահատել առանձնացված օբյեկտներում նավթագազաբերությունը: Այդ աշխատանքները նախատեսվում են իրականացնել 7250կմ² մակերեսով 2-րդ պայմանական տարածքում:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊ ընկերության կողմից երկրաֆիզիկական մեթոդներով առաջին փուլի ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են << Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Դաշտային աշխատանքեր նախատեսվում է իրականացնել Կենտրոնական դեպրեսիայի 221 կմ² մակերեսով (<< Արագածոտնի մարզի Օրգովի, Բյուրականի և Տեղերի համայնքներ - 86կմ², << Կոտայքի մարզի Եղվարդի, Սարալանջի, Արագյուղի, Քարաշամբի համայնքներ - 135 կմ²) և Մերձարաքսյան դեպրեսիայի 112 կմ² մակերեսով (<< Արմավիրի մարզի Տավորիկի, Հուշակերտի, Նոր Ամասիայի, Նոր Արմավիրի, Նոր Կեսարիայի և Նալբանդյանի համայնքներ) տարածքներում:

Ուսումնասիրվող տարածքի նստվածքային հաստվածքի խորությունը տատանվում է 400-500 մ-ից մինչև 600-700 մ-ի սահմաններում: Ստրատիգրաֆիական կտրվածքում մասնակցում են՝ սկասած վերին մինչքեմբրիցից մինչև պլեյստոցենի հասակի առաջացումները: Դաշտային քարտեզագրական աշխատանքները կիրականացվեն



երկրաբանական երթուղիների (պրոֆիլների) անցկացման միջոցով՝ հաշվի առնելով հայտնի երկրաբանական կառուցվածքների տարածական կողմնորոշավությունը:

Նախատեսվող երկրաբանական, հանույթային, գեոքիմիական և հիդրոքիմիական դաշտային աշխատանքների ծավալները (1400 կմ որոնողական երթուղիների անցում, 2750 նմուշառում բիտումի, օրգանական նյութերի և ապարների կոլեկտորային հատկությունների ուսումնասիրության նպատակով) մոտավոր են, որոնք կհստակեցվեն աշխատանքների իրականացման փուլում: Հիդրոքիմիական հետազոտությունների կենթարկվեն մակերևութային ջրերի հոսքերից վերցված նմուշները:

Գրավի և մագնիտո հետախուզական հանույթային աշխատանքները կիրականացվեն 200-ից մինչև 500 մ հեռավորությամբ երթուղիների անցման միջոցով, դիտարկման կետերի հեռավորությունը կկազմի 50մ:

Երկրաբանաորոնողական աշխատանքների այս փուլում հորատանցքի հորատման աշխատանքներ չի նախատեսվում:

Ընտրված տարածքների սեյսմիկ տեղազննման և գրավի հետախուզական (պրոֆիլային) աշխատանքների կատարման ընթացքում հողային ծածկույթի խախտում չի նախատեսվում և շրջակա միջավայրի վրա ազդեցություններ չեն կանխատեսվում: Փոխադրումների իրականացման ժամանակ օգտագործվելու են միայն գոյություն ունեցող ճանապարհները: Երկրաբանական ուսումնասիրությունները կկատարվեն ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի և վարձակալվող տեխնիկական միջոցներով:

«Տարածքի նավթի և գազի հետախուզման 2-րդ պայմանական տարածքների կոորդինատներն են (ARM WGS-84 համակարգ)՝

1. Y=8394335 X=4505877 /Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահման/
2. Y=8476285 X=4505877
3. Y=8476285 X=4461295
4. Y=8485852 X=4461295
5. Y=8485852 X=4432960
6. Y=8477495 X=4432960
7. Y=8477466 X=4401765 /Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահման/

Նավթի և գազի հետախուզական երկրորդ պայմանական տարածքում երկրաբանական ուսումնասիրությունը նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ.

- առկա երկրաբանական, երկրաֆիզիկական և երկրաքիմիական տվյալների հավաքագրում
- երկրաբանական, հանույթային /չափագրական/ և երկրաքիմիական աշխատանքների իրականացում,
- տարածքի սեյսմիկ տեղազննման՝ տատանման ալիքների աղբյուրների և ընդունման կետի տեղադրման հնարավոր տեղամասերի ընտրություն,
- գրավի հետախուզական (պրոֆիլային) աշխատանքների իրականացում՝ սեյսմոհետախուզական աշխատանքների հետ զուգընթաց
- գեոդեզիական հենակետային ցանցի ստեղծում,
- փորձնական աշխատանքների իրականացում՝ նպատակ ունենալով ընտրել նորագույն սարքավորումների համապատասխան տեսակներ և բնութագրեր /ընդունիչ կայան, տատանման աղբյուր, դիտարկումներ և այլն/:

Երկրաբանական երթուղիների տվյալների արդյունքները կհամադրվեն արբանակային լուսանկարների վերծանումների, ինչպես նաև գրավի մետրիական և մագնիտոմետրիական հանույթային տվյալների հետ:



Սեյսմիկ հետազոտությունները նախատեսվում է իրականացնել ընդհանուր խորքային կետ (ՕԴՏ) մեթոդով՝ «Прорсеcc-П» սեյսմոկայանի և BV620 սեյսմիկ վիբրոտորի միջոցով՝ ընդունիչ կայանի, տատանման աղբյուրի, ինչպես նաև դիտարկումների բնութագրերն ընտրելուց հետո: Մեթոդը հանդիսանում է արդյունավետ մեթոդներից՝ նավթի և բնական գազի կուտակումների հայտնաբերման նպատակով՝ հորատանցքի տեղադիրքի որոշման համար:

Գեոդեզիական հենակետային ցանցի ստեղծման համար բոլոր դաշտային կոորդինատները կգրանցվեն GPS-նավիգատոր համակարգի՝ ձեռքի սարքերով: Գրավիտատախուզական աշխատանքները կիրականացվեն՝ ГИУ-КВ գրավիմետրի միջոցով, իսկ մագնիսահետախուզականը՝ М-17 մագնիտոմետրի:

Ընտրված տարածքների սեյսմիկ տեղազննման և գրավիտատախուզական (պրոֆիլային) աշխատանքների կատարման ընթացքում հողային ծածկույթի խախտում չի նախատեսվում: Փոխադրումների իրականացման ժամանակ օգտագործվելու են միայն գոյություն ունեցող ճանապարհները:

Առաջին փուլի երկրաֆիզիկական մեթոդներով իրականացվելիք աշխատանքների տեխնոլոգիայով բացասական ազդեցությունը գործունեության ենթակա տարածքների բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Աշխատանքները որևէ ազդեցություն չեն ունենա նաև պահպանվող էկոհամակարգերի վրա, քանի որ իրականացվելու են բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններից դուրս: Զրային ռեսուրսների աղտոտում նույնպես չի կանխատեսվում, քանի որ արտահոսքեր չեն առաջանա:

Աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները չի նախատեսվում, քանի որ առաջին փուլի աշխատանքների տեխնոլոգիան և մեթոդաբանությունը բացառում են շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների դրսևորում:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքներում բացառվել է նաև սողանքավտանգ տեղամասերում ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Նավթի և գազի երկրաֆիզիկական մեթոդներով ուսումնասիրություն իրականացնող անձնակազմի համար կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 14.02.2018թ. և 15.02.2018թ. ՀՀ Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում ազդակիր համայնքների և բնակավայրերի շահագրգիռ հանրության մասնակցությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրային քննարկումներ: Քննարկումների ընթացքում ծրագրի իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության:

Եզրահանգում. Ամփոփելով վերը շարադրվածը և ելնելով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից պետք է փաստել, որ առաջին փուլի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների /օդային և ջրային ավազաններ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, բնության հատուկ պահպանվող տարածքներ և այլն/ վրա հնարավոր ազդեցություններ չեն ակնկալվում: Ծրագրով նախատեսված և նախնական գնահատման հայտում ամրագրված աշխատանքների իրականացման արդյունքում գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Առաջին փուլի աշխատանքների ավարտից հետո /երբ կորոշվի որոնողահետախուզական հորատանցքի տեղը և խորությունը/ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հորատման աշխատանքների իրականացմամբ՝ երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

3. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում որպես կարևորագույն պայմաններ անհրաժեշտ է՝

- բացառել բնության հատուկ պահպանվող տարածքներում երկրաբանաորոնողական աշխատանքների իրականացումը

- բացառել ստորերկրյա ջրաղբյուրների հիդրոքիմիական հետազոտությունները

- աշխատանքների իրականացման համար օգտագործել գոյություն ունեցող ճանապարհները

- ջրօգտագործումը, առաջացած տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԱՅԿԱԿԱՆ ՆԱԿԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ երկրորդ պայմանական տարածքում նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Հ. Մկրտչյան